02

Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

32 (1431) • 30 օգոստոսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Աշխատանքային խորհրդակցություն

Օգոստոսի 27-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը: Ներկա էին ոստիկանության կոլեգիայի անդամներ, կենտրոնական վարչակազմի ստորաբաժանումների ու մարզային վարչությունների պետեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործություններ բացահայտելու համար ոստիկանության մի խումբ ծառայողներ ոստիկանության պետի հրամանով պարգեւատրվեցին հավելյալ պարգեւավճարներով:

Խորհրդակցության հիմնական թեման ուսումնական տարվա մեկնարկն էր: Ոստիկանության պետը բոլոր ստորաբաժանումներին հանձնարարեց սեպտեմբերի 1-ից անցնել ուժեղացված ծառայության:

Շնորհակալություն հայտնելով բարեխիղճ ծառայության համար՝ Վալերիյ Օսիպյանը ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչությանը հանձնարարեց ակտիվացնել անչափահասների հետ տարվող աշխատանքները: Ոստիկանության պետն ընդգծեց, որ ամեն ինչ պետք է արվի, որպեսզի ոչ միայն սեպտեմբերին, այլեւ ուսումնական ողջ տարվա ընթացքում անցանկալի միջադեպեր չլինեն:

էջ 2

Հանդիսավոր միջոցառում ՈՉ զորամասում

Օգոստոսի 28-ին Ոստիկանության զորքերի 1033 զորամասում հանդիսավոր արարողություն էր. նշվում էր զորամասի կազմավորման 29-րդ տարեդարձը:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը, որպես առաջին կանոնավոր ռազմական կազմավորում, աշխարհազորայինների հետ ստանձնեց հայրենիքի սահմանների պաշտպանության գործը...

Ջոկատը մարտական գործողությունների մասնակցեց ռազմաճակատի ամենածանր, ամենավտանգավոր, ռազմական կարեւորության տեղամասերում:

Ջոկատի հերոսական ուղուն նվիրված ելույթներից հետո զորամասի հատուկ վաշտը ներկայացրեց ցուցադրական վարժություններ:

Պարգեւատրման արարողությունից հետո հարգանքի տուրք մատուցվեց Հայաստանի Հանրապետության ազգային հերոսների եւ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ծառայողների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի մոտ, ապա տեղի ունեցավ հանդիսավոր քայլերթ:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի կազմավորումը ժամանակի հրամայականն էր. հայոց բանակը դեռ չէր ձեւավորվել, երկրի սահմանները դարձել էին հակառակորդի ասպատակությունների թիրախ, ինքնապաշտպանական խմբերը ծանր կացության մեջ էին:

Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատն իր հերոսական ճանապարհին նաեւ զոհեր տվեց: Հանուն հայրենիքի կյանքը զոհածներից շատերը Եռաբլուրում են հանգչում: Եվ խորհրդանշական էր հանդիսավոր միջոցառումն ամփոփել Եռաբլուրում...

Ընդունելություն ոստիկանությունում

Օգոստոսի 27-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիին:

Ողջունելով հյուրին՝ Վալերիյ Օսիպյանը կարեւորեց երկու հարեւան պետությունների բարեկամական հարաբերությունները, ինչի շնորհիվ էլ արդյունավետ համագործակցություն կա Հայաստանի եւ Իրանի իրավապահ կառույցների միջեւ:

Ոստիկանության պետը նշեց, որ Հայաստանի ոստիկանության եւ Իրանի ներքին գործերի նախարարության միջեւ կա համագործակցության առավել սերտացման հեռանկար:

Սեյեդ Քազեմ Սաջադին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ նշեց, որ ավարտում է առաքելությունը Հայաստանում: Նա իր գոհունակությունը հայտնեց ոստիկանությանը՝ Իրանի դեսպանության հետ սերտ համագործակցության համար: Անկախ իր գտնվելու վայրից՝ խոստացավ աջակցել նորանշանակ դեսպանին՝ հայ-իրանական բարեկամությունը առավել ամրապնդելուն ուղղված միջոցառումներ իրականացնելիս:

Դեսպանը նշեց, որ մեծացել է Հայաստան մեկնող իրանցի զբոսաշրջիկների, ինչպես եւ Իրան մեկնող հայ զբոսաշրջիկների թիվը:

Վալերիյ Օսիպյանը շնորհակալություն հայտնեց համագործակցության համար եւ Սեյեդ Քազեմ Սաջադիին մաղթեց հաջողություններ:

Հարուցվել է քրեական գործ

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները բացահայտել են արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մի խումբ աշխատակիցների ապօրինությունները:

Ըստ նախնական տվյալների՝ քրեակատարողական ծառայության գնումների գործընթացը գնահատող հանձնաժողովի պատասխանատու անձը, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, չարամտորեն խախտել է հրապարակային սակարկությունների անցկացման կարգը եւ կառավարության որոշմամբ սահմանված գնումների գործընթացի կազմակերպման մասին պահանջները:

էջ 3

ՌՈ գնդապետի ապօրինությունները

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները տեղեկություններ էին ստացել, որ Ռուսաստանի Դաշնության իրավապահների կողմից թմրանյութերի շրջառության եւ մաքսանենգության մեղադրանքով հետախուզվող քաղաքացին Հայաստանի ռազմական ոստիկանության աշխատակցին տվել է կաշառք՝ քննությունից թաքնվելու եւ հետախուզման հարցերը լուծելու համար:

Օգոստոսի 9-ին հետախուզվողը հայտնաբերվել է Երեւանում: Նա հաղորդում է տվել, որ ռազմական ոստիկանության գնդապետին կանխիկ եւ բանկային փոխանցումներով տվել է մոտ 6 միլիոն ռուբլի կաշառք:

էջ 2

Մահացու հարված՝ գերանդիով

Օգոստոսի 20-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնում հիվանդանոցից հաղորդում ստացվեց, որ որովայնի, կրծքավանդակի եւ նախաբազկի կտրած վերքերով իրենց մոտ բուժօգնության է եղափոխվել Շնող գյուղի 48-ամյա մի բնակիչ:

Նոյեմբերյանի ոստիկանների հետ համատեղ ձեռնարկված միջոցառումներով ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողները պարզեցին, որ օգոստոսի 19-ի երեկոյան, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, Շնող գյուղի հանդամասում տուժողին գերանդիով մարմնական վնասվածքներ էր պատճառել համագյուղացին, որը բերման ենթարկվեց ոստիկանության Թումանյանի բաժին: Նույն օրը հիվանդանոցից նոր ահազանգ ստացվեց: Բժիշկներին չէր հաջողվել փրկել 48-ամյա տղամարդուն. վնասվածքները կյանքի հետ անհամատեղելի էին:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Երեքին էլ դանակահարել էր

Տուժողները եւ ռեստորանի աշխատակիցը վիճաբանել էին, եւ ռեստորանի աշխատողը երեքին էլ դանակահարել էր:

էջ 2

Ապօրինական միգրացիա

Որոշ քաղաքացիներ երբեմն փնտրում են արտերկիր մեկնելու անօրինական ճանապարհ եւ հայտնվում թակարդում:

էջ 3

«Սպանություն հաչույքի համար»



Դավադիրները միմյանց ուղարկած նամակներում մանրամասն քննարկում էին սպանության ծրագիրը:

էջ 5

Աշխատանքային խորհրդակցություն

Սկիզբը՝ էջ 1

Ճանապարհային ոստիկանությանը հանձնարարվեց թարմացնել ուսումնական բոլոր հաստատությունների մոտակայքի գծանշումները, տեղադրել ճանապարհային նշաններ, եթե դրանք բացակայում են: Օգնել ծնողներին ու աշակերտներին փողոցներն անցնել, հաստատել կարգուկանոն դպրոցների շրջակայքում, պատասխանատվության ենթարկել երկրորդ շարքում կանգնած կամ այլ խախտումներ կատարող վարորդներին, դպրոցների մոտ հնարավորինս բացառել խցանումները:

Ոստիկանության պետը հորդորեց նաեւ ոստիկանության տարբեր ծառայությունների աշխատակիցներին այցելել կրթական հաստատություններ, զրուցել տնօրինության հետ, գնահատել իրավիճակն ու ճշգրիտ կազմակերպել ծառայությունը:

Հանձնարարվեց նաեւ ուժեղացնել հսկողությունը մարդաշատ վայրերում ու առեւտրի կենտրոններում, որովհետեւ հատկապես այդ հատվածներում հնարավոր է գրանցվեն գրպանահատությունների դեպքեր: Վալերիյ Օսիպյանը հորդորեց ուժեղացված ծառայությամբ կանխել նման զարգացումները:

Հանձնարարվեց հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման ուղղությամբ շարունակել բակային հանդիպումները բնակիչների հետ, լսել խնդիրները եւ լուծումներ գտնել:

Հանցավորության դեմ պայքարի մասով ոստիկանության պետը խիստ հանձնարարեց անհարդուրժող լինել հանցագործի նկատմամբ:

Այս ամառ հանրապետությունում գրանցվում են աննախադեպ մեծ քանակի հրդեհներ: Ոստիկանության պետը հանձնարարեց բացահայտել հրդեհների առաջացման պատճառները, հայտնաբերել մեղավորներին ու ենթարկել պատասխանատվության: Իրականացնել նաեւ կանխարգելիչ միջոցառումներ՝ հրդեհները բացառելու ուղղությամբ:

Խոսվեց նաեւ ոստիկանության ծառայողներին հատկացվող պարգեւավճարների մասին: Վալերիյ Օսիպյանը ստորաբաժանումների ղեկավարներին հորդորեց դրանք բաշխել անաչառ: Բարեխիղճ ծառայողը պետք է ստանա արժանի գնահատական:

Խորհրդակցությանը քննարկվեցին ոստիկանության ծառայությանը եւ հանցավորության դեմ պայքարին վերաբերող այլ հարցեր եւս:

Կատարվում է քննություն

Օգոստոսի 14-ին ոստիկանության ՊՊԾ գնդի ծառայողները տեղեկություններ էին ստացել մայրաքաղաքի ակումբներից մեկում տեղի ունեցող վիճաբանության եւ ծեծկռտուքի մասին: Տեղում ոստիկանները պարզել էին, որ մի խումբ անձինք ակումբի հարակից տարածքում կատարում են խուլիգանական գործողություններ:

Օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններն իրացնելով՝ ոստիկանության ծառայողները խափանել են հասարակական կարգի խմբային խախտումը եւ առերեւույթ հանցագործություն կատարելու կասկածանքով բերման ենթարկել հինգ անձի:

Բերման ենթարկված մի քաղաքացի, գտնվելով ոչ սթափ վիճակում, շարունակել է խուլիգանական գործողություններ կատարել նաեւ ոստիկանության բաժնում:

Փաստի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնում հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական կոմիտե՝ նախաքննության:

Ի դեպ, միջադեպի տեսանյութը տարածվեց նաեւ համացանցում: Զարմանալի է, որ ՁԼՄ-ների որոշ ներկայացուցիչներ եւ օգտատերեր ակնարկում էին, թե ինչու ոստիկանները «չեն պատժում» հարբած տղամարդուն: Ոստիկանությունը օրենքի շրջանակում ապահովում է հասարակական կարգը, վերականգնում քաղաքացիների ոտնահարված իրավունքները եւ հաստատում կարգուկանոն: Ոստիկանության խնդիրը այս փուլում անձանց պատժելը չէ՝ անկախ այդ բառի իմաստային դրսեւորումներից: Իրավախախտում կատարած ցանկացած անձի գործողություններին իրավական գնահատական է տրվում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, որի արդյունքում, անձին վերագրվող արարքը սահմանված կարգով ապացուցվելու դեպքում, կիրառվում են իրավաբանական պատասխանատվության եւ հարկադրանքի համարժեք միջոցներ:

Ոստիկանությունը կոռուպցիա է բացահայտել

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ արդարադատության նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի մի շարք պաշտոնատար անձինք, անձնական շահագրգռվածությունից ելնելով, իրենց կարգադրիչ գործողությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելով, կազմակերպել են Երեւանի Բաղրամյան եւ Բագրատունյաց պողոտաներում գտնվող անշարժ գույքերի օտարումը, ինչի արդյունքում թույլ տված ապօրինությունների հետեւանքով Երեւան համայնքին, ինչպես եւ մի շարք նոտարների պատճառվել են առանձնապես խոշոր չափերի վնաս:

Դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով, նոտարների բացատրություններով եւ ձեռք բերված փաստական այլ տվյալներով պարզվել է, որ արդարադատության նախարարության նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձը, նույն նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի մի շարք պաշտոնատար անձանց հետ, 2012-2013 թթ. Բաղրամյան պողոտայում իրենց գործունեությունն իրականացնող նոտարներին տվել է բանավոր կարգադրություններ՝ չկատարելու դեպքում խոչընդոտել մասնագիտական գործունեությունը կամ ազատել աշխատանքից: Իսկ Բագրատունյաց պողոտայի գրասենյակի նոտարին գցել են մոլորության մեջ: Այդպիսով զրկել են նոտարներին Երեւան քաղաքի սեփականություն հանդիսացող նոտարական գրասենյակների տարածքները տնօրինելու իրավունքից:

Այնուհետեւ իրենց հետ փոխկապակցված քաղաքացիների ներգրավմամբ՝ փաստացի կազմակերպել եւ Երեւանի քաղաքապետարանի կողմից հայտարարված աճուրդների, «Հողի եւ ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի աշխատակիցների կողմից լիազորությունները չարաշահելու արդյունքում, շուկայականից անհամեմատ ցածր արժեքներով գնահատելով, Երեւանի քաղաքապետարանից առուվաճառքի պայմանագրով ձեռք են բերել նշված անշարժ գույքերը: Հետագայում նույն քաղաքացիների անունից կնքված վարձակալության պայմանագրերի հիման վրա, շուկայականից անհամեմատ բարձր գներով, նույն տարածքները վարձակալությամբ հանձնել են նոտարներին:

Հարուցվել է քրեական գործ:

Ապօրինություններ են բացահայտվել

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունների հիման վրա նախապատրաստված նյութերով բացահայտվել են Երեւանի Կենտրոն վարչական շրջանի «Կենտրոն-1» համատիրության նախկին նախագահի ապօրինությունները:

Ըստ նախնական տվյալների՝ նա 2008-ից 2018 թվականն ընկած ժամանակահատվածում համատիրությունում գանձող տեսուչ է հրամանագրել կնոջը, որը աշխատանքի չի ներկայացել եւ չի կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտականությունները: Այդ պարտականությունները նրա փոխարեն կատարել են համատիրության մյուս աշխատակիցները:

Համատիրության նախկին նախագահը գանձումների բաժնի նախկին պետի հետ, կնոջ հաճախելիության վերաբերյալ կեղծ տեղեկություններ մտցնելով եւ դրանք հաստատելով, կազմել են աշխատաժամանակի կեղծ հաշվարկի տեղեկագրեր: Դրանց հիման վրա հափշտակվել է կնոջ անվամբ հաշվարկված աշխատավարձերի եւ պարգեւավճարների առանձնապես խոշոր չափերի՝ 21 միլիոն 127 հազար դրամը:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈ գնդապետի ապօրինությունները

Սկիզբը՝ էջ 1

Քննությամբ ձեռք են բերվել փաստական տվյալներ, որ ռազմական ոստիկանության գնդապետը չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, ծանոթի որդու Հայաստան ժամանելուն պես չի կատարել իր ծառայողական պարտականությունները եւ չի ապահովել նրան պատասխանատվության ենթարկելը:

2014-2016 թթ., հետախուզվող երիտասարդի օգտին գործողություն կատարելու, նրան ՀՀ քաղաքացիություն շնորհելու եւ հետագայում զինվորական գրքույկ տրամադրելու համար նրա հորից ստացել է 6 միլիոն ռուբլի կաշառք: Նաեւ 2015 թ. նոյեմբերին գնդապետը, ուրիշի գույքի հափշտակության ուղղակի դիտավորությամբ, որդու եւ ծնողների Ռուսաստանում գտնվող գույքն ընկերների միջոցով վնասելու սպառնալիքով, հորը ներկայացրել է իր օգտին 1 միլիոն ռուբլու գույքային գործողություն կատարելու պահանջ:

Հարուցվել է քրեական գործ:

Վեճ՝ կրակոցներով



Օգոստոսի 24-ի ուշ երեկոյան ոստիկանության Արարատի բաժնում ահազանգ էր ստացվել, որ ՈԿՖ բանավանի մոտ կրակոցների ձայն է լսվում:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ Արարատ քաղաքի ՈԿՖ բանավանի մի բակում անծանոթ անձինք, մեքենան արագ վարելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, ծեծել են արարատցի 28-ամյա մի տղամարդու, նա էլ, պաշտպանվելու նպատակով, օդածնշիչ ատրճանակից կրակել է նրանց ուղղությամբ:

Քրեական հետախույզները ճշտեցին, որ քաղաքացու հետ վեճի բռնված տղամարդկանցից մեկը Արարատ քաղաքից է, մյուսը՝ Արարատ գյուղից:

Բացատրական աշխատանքների շնորհիվ նրանք ներկայացան ոստիկանության Արարատի բաժին:

Կատարվում է քննություն:

Ն.Ս.

Երեքին էլ դանակահարել էր

Օգոստոսի 22-ի երեկոյան Դավթաշենի 4-րդ թաղամասում վեճ ու կռիվ էր: Սպառնալիքներ էին հնչում, վիրավորանքներ: Մի պահ աղմուկն ավելի սաստկացավ, հետո ամեն ինչ լռեց...

Իսկ թե ովքեր էին, վեճն ինչով ավարտվեց, ժամը 23-ին ոստիկանության Մաշտոցի բաժնում տեղեկացան «Արմենիա» բժշկական կենտրոնից: Հերթապահ բուժքույրը հայտնեց, որ մարմնի տարբեր հատվածներում կտրած-ծակած վերքերով երեք քաղաքացի է հիվանդանոց տեղափոխվել: Հիվանդանոց, ապա Դավթաշենի 4-րդ թաղամաս մեկնած ոստիկաններն անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացրին:

Դեպքը Տիգրան Պետրոսյան փողոցի ռեստորանի դիմաց էր կատարվել: Փողոցի տեսախցիկները ֆիքսել էին ծեծկռտուքը:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանները պարզեցին, որ նույն օրը, ժամը 22.30-ի սահմաններում, տուժողները եւ ռեստորանի աշխատակիցը վիճաբանել են, եւ ռեստորանի երեսնամյա աշխատողը երեքին էլ դանակահարել է:

Կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանության Մաշտոցի բաժին եւ խոստովանեց:

Կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ոստիկանությունը միշտ քաղաքացու կողքին է

Հասարակության շրջանում մեծացել է ոստիկանության հանդեպ վստահությունը:

Վստահության աճը հիմնականում պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանցից մեկն էլ ոստիկանություն-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումներն են:

Ոստիկանության պետը ամիսը մեկ ընդունում է քաղաքացիների, լսում նրանց բողոքներն ու առաջարկությունները: Բարձրացրած հարցերը հաճախ լուծվում են տեղում. ոստիկանության պետը տեղում կապ է հաստատում ստորաբաժանումների ղեկավարների հետ, տալիս կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ:

Ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարը հանրապետության բոլոր մարզերում հանդիպումներ է ունեցել բնակիչների հետ: Հանդիպումներին մասնակցել են նաեւ ոստիկանության մարզային վարչության ղեկավարությունն ու տարածքային բաժինների պետերը:

Թեեւ քաղաքացիների բարձրացրած խնդիրները ոչ միշտ են կապված լինում ոստիկանության գործառույթների հետ, այդուհանդերձ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ղեկավարությանը հանձնարարվում է աջակցել քաղաքացիներին՝ հարցերին դրական լուծում տալու համար:

Ոստիկանության տարածքային բաժինների ծառայողները պարբերաբար բակային հանդիպումներ են ունենում բնակիչների հետ: Այդ ընթացքում լսում են նրանց բողոքներն ու առաջարկությունները: Քննարկվում են նաեւ հանցագործությունների թիրախ չդառնալու, գույքն ապահով պահելու եւ ոստիկանության հետ համագործակցության մասին հարցեր:

Խոսենք թվերով: Միայն այս տարի՝ հունվարից հուլիս ընկած ժամանակահատվածում, ոստիկանությունում ստացվել է 1 միլիոն 108 հազար 710 դիմում-բողոք, անցած տարվա նույն ժամանակահատվածում դրանց թիվը 978 հազար 174 էր:

Դիմում-բողոքներից դրական լուծում են ստացել 1 միլիոն 25 հազար 576-ը: Սա 13 տոկոսով ավելի է անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ոստիկանությունն ընթացք է տալիս քաղաքացիների յուրաքանչյուր դիմումին:

Անօրինական միգրացիա

Ինչպես ցանկացած իրավական պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում է իր պետական սահմանը հատելու կարգը: Առանց համապատասխան փաստաթղթերի կամ պատշաճ թույլտվության ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելը առաջացնում է պատասխանատվություն կա՛մ տուգանքի, կա՛մ ազատազրկման տեսքով: Մարդկանց տեղաշարժը պետք է կատարվի ոչ այլ կերպ, քան օրինական ճանապարհով: Օրենքով նախատեսված կարգին պետք է համապատասխանի նաեւ անձի՝ օտար պետությունում գտնվելու եւ կացության կարգավիճակը: Մասնավորապես՝ առանց մուտքի մուտքի վիզայի ռեժիմի այլ պետությունների քաղաքացիները Հայաստանում կարող են բնակվել մեկ տարվա ընթացքում 180 օր: Եթե ցանկանում են սահմանված ժամկետից ավելի բնակվել, ապա պետք է դիմեն ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն՝ կացության կարգավիճակ ստանալու համար:

Եթե օտարերկրյա քաղաքացին խախտել է Հայաստանում գտնվելու ռեժիմը կամ ՀՀ սահմանը հատել է կեղծ փաստաթղթերով, ապա գործ ունենք անօրինական միգրացիայի հետ: Սա, համաշխարհային ինտեգրացիոն գործընթացներով պայմանավորված, նոր երեւույթ է, որը պահանջում է համապատասխան փոփոխություններ օրենսդրական դաշտում: Հիմք ընդունելով անդրազգային հանցավորության դեմ պայքարի կոնվենցիային կից արձանագրությունը՝ 2014 թվականի հունիսի 21-ին ընդունվեց օրենք, համաձայն որի՝ ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր՝ 329 պրիմ 1 հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է սահմանվել անօրինական միգրացիայի կազմակերպման համար:

Միգրացիոն հոսքերի հետազոտությունները փաստում են, որ տարեցտարի աճում են նաեւ անօրինական միգրացիայի կազմակերպման դեպքերը, որոնք իրականացվում են ամենատարբեր միջոցներով: Միսակ Մարկոսյանի հաղորդմամբ՝ քրեական օրենսգրքի 329 պրիմ 1 հոդվածի 1-ին մասը քրեորեն պատժելի արարք է սահմանում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Հայաստան մուտքը, Հայաստանի տարածքում գտնվելը կամ Հայաստանով տարանցումը շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ կամ կեղծ փաստաթղթեր եւ կեղծ տեղեկատվություն ներկայացնելով:

Արտերկիր մեկնելու օրինական ընթացակարգի ինչ-ինչ բարդություններով եւ ժամանակատարությամբ պայմանավորված՝ որոշ քաղաքացիներ երբեմն փնտրում են մեկնելու անօրինական ճանապարհներ, ուստի նրանց համար բացառված չէ խարդախների թակարդում հայտնվելը: Նման դեպքերը բացահայտելու եւ մեղավորներին քրեական պատասխանատվության ներկայացնելու համար ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 3-րդ վարչության կազմում գործում է անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժին:

Երբ հայտնաբերվում են օտարերկրյա քաղաքացիներ, որոնք խախտել են Հայաստանում գտնվելու ռեժիմը, ապա ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության համապատասխան ստորաբաժանման ծառայողների կողմից կազմվում է վարչական արձանագրություն՝ համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 201-րդ հոդվածի, որն էլ սահմանում է 50-ից 100 հազար դրամի չափով տուգանք:

Երկուսը՝ Ֆրանսիայի հրապարակից

Օգոստոսի 15-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ թիվ 58 երթուղու ավտոբուսում պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող, նույնականացման ու բանկային քարտեր:

Հաղորդումը ստանալուն պես ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները սկսեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկել: Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները, եւ հենց նրանց պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ էլ օրեր անց գողություն կատարած անձը հայտնաբերվեց: Քրեական հետախույզները Ֆրանսիայի հրապարակից ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին Ամիրյան փողոցի 31-ամյա մի բնակչի, որը խոստովանեց կատարածը:

Օգոստոսի 16-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ Թումանյան փողոցի սրճարաններից մեկում ինչ-որ մեկը իր պայուսակից գողացել է դրամապանակը, որի մեջ եղել է փող:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի եւ Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ ժամեր անց գողությունը բացահայտվեց: Քրեական հետախույզները Ֆրանսիայի հրապարակից ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին Զավարյան փողոցի մի բնակչի, որը խոստովանական ցուցմունք տվեց:

Կատարվում է քննություն:

Հարուցվել է քրեական գործ

Սկիզբը՝ էջ 1

2016-2017 թթ. սնդամթերքի ձեռք բերման համար հայտարարված մրցույթների փուլում առավել ցածր գնային առաջարկ ներկայացրած տարբեր տնտեսվարողներից ապրանքի նմուշ ու սերտիֆիկատ պահանջելու եւ այդ կերպ նրանց համար արհեստական խոչընդոտներ ստեղծելով՝ անհիմն մերժել է հայտերն ու պայմանագրեր կնքել առավել բարձր գնային առաջարկ ներկայացրած տնտեսվարողների հետ: Արդյունքում պետության օրինական շահերին պատճառվել է 13 միլիոն 122 հազար դրամի վնաս, ինչպես եւ հեղինակազրկվել է պետական մարմնի համբավը:

Այնուհետեւ քրեակատարողական ծառայության մի խումբ պաշտոնատար անձինք, փաստացի ապրանքների ձեռք բերման մրցույթների անցկացված չլինելու պայմաններում, կազմել են հիշյալ մրցույթներն անցկացված լինելու եւ տնտեսվարողների հայտերը մերժելու վերաբերյալ կեղծ արձանագրություններ, որոնք հաստատվել են ժամանակավորապես կարգադրիչ լիազորություններով օժտված հանձնաժողովի անդամների կողմից:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Ոստիկանները բացահայտել են դանակահարությունը

Օգոստոսի 11-ին, ժամը 18.15-ին, ոստիկանության Մաշտոցի բաժնում «Արմենիա» բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ որովայնի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել Նորքի 33-ամյա մի բնակիչ:

Ոստիկանները մեկնել էին հիվանդանոց: Տուժողն ի վիճակի չէր եղել բացատրություն տալու: Մտերիմներն էլ, թաքցնելով դեպքի իրական հանգամանքները, հայտնել էին՝ իբր մարմնական վնասվածքը ստացել է Լոռու մարզի Լերմոնտովո գյուղի Այգեգործական փողոցում անհայտ անձանց հետ վիճաբանելիս:

Նախապատրաստված նյութերը տարածքային կարգով ուղարկվեցին ոստիկանության Գուգարքի բաժին:

Ձեռնարկված միջոցառումներով ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները տեղեկություններ ստացան, որ Այգեգործական փողոցի տնակներից մեկում մի քանի բաժակ խմելուց հետո, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, տուժողին մարմնական վնասվածք էր պատճառել Երեւանի Բակունցի փողոցի 25-ամյա բնակիչ նրա ընկերը:

Օգոստոսի 19-ին հարազատների հետ տարված բացատրական աշխատանքների շնորհիվ կասկածվողը ներկայացել է բաժին եւ խոստովանել, որ Լերմոնտովո գյուղում տուժողի հետ վիճելիս դանակով երկու անգամ խփել է նրա որովայնին:

Կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ներընտանեկան դրամաներ

Գուրգեն Հովհաննիսյանը, որ ապրում է Երեւանում, հարազատ գյուղի հետ կապը չէր խզել: Շիրակի մարզի Զորակապ գյուղում էին ապրում ծնողները եւ եղբայրը: Ամիսներ առաջ Գուրգենը գնաց գյուղ՝ հարազատներին տեսակցելու: Ինչպես միշտ՝ նրան գրկաբաց ընդունեցին: Կշարունակվեր հարազատների ջերմ շփումը, եթե չհարբեր: Ոգելիցի ազդեցությամբ նա դառնում էր կռվարար: Եղբոր՝ Երվանդի հետ սկսեց վիճել: Վեճի ընթացքում էլ խփեց նրան, նաեւ կոտրեց պատուհանի ապակին՝ վնասելով ձեռքը:

Որդիների վեճին միջամտեց հայրը՝ Գրիգորը, ու միայն դրանից հետո Գուրգենը խաղաղվեց:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Գուրգեն Հովհաննիսյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Արթիկ քաղաքում նույն հարկի տակ ապրող Բաղդասարյան եղբայրները մշտապես վիճում էին: Հիմնական աշխատանք չունեին, սակայն հակոբը երբեմն շինարարական աշխատանքներ կատարելով գումար էր վաստակում: Ի դեպ, երկուսն էլ ոգելիցի սեր ունեին: Հարբած ժամանակ վեճերն ավելի բուռն էին ընթանում: Հակոբը մեղադրում էր եղբորը չաշխատելու եւ իր հաշվին ապրելու համար:

Հերթական վեճը չուշացավ: Մինչ այդ հարբեցին ու վերստին իրար չհասկացան: Հակոբը ափսեով եւ բռունցքներով խփեց Վարդանի գլխին, դեմքին, նա էլ հակադարձեց: Այդքանով վեճն ավարտվեց:

Վարդանի ցավերը չէին մեղմվում եւ դիմեց բուժօգնության: Բժշկական կենտրոնից ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում ստացվեց, որ մարմնական վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել Վարդան Բաղդասարյանը, որի ասելով՝ վնասվածքը ստացել էր հարբած վիճակում ընկնելու հետեւանքով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում, սակայն, պարզվեցին դեպքի մանրամասները: Կողմերը բացատրություններ տվեցին: Նշանակվեց նաեւ դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Վարդանին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով: Ու թե Հակոբը խախտել էր 117 հոդվածի պահանջները, ապա Վարդանի արարքում առկա էր 118 հոդվածով նախատեսված հանցարարք:

Եղբայրները բողոքը չեն պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գողություն Օձունում

Օգոստոսի 17-ին Օձուն գյուղի մի ՍՊԸ տնօրեն ոստիկանության Թումանյանի բաժնում հաղորդում էր տվել, որ ընկերության պահեստի բաց տարածքից գողացել են խողովակի 160 կցաշուրթային փական՝ պատճառելով մոտ 1 միլիոն 150 հազար դրամի նյութական վնաս:

Գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ընթացքում Թումանյանի բաժնի հետաքննության խմբի ծառայողները տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Ալավերդի քաղաքի երեսնամյա մի բնակիչ:

Մտերիմների հետ տարված բացատրական աշխատանքների շնորհիվ օգոստոսի 19-ին կասկածվողը ներկայացավ ոստիկանության Թումանյանի բաժին:

Նա տվել է խոստովանական բացատրություն, որ օգոստոսի 17-ի գիշերը ինքն է գողությունը կատարել, գողացած կցաշուրթային փականները տեղափոխել է Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասում գտնվող իր անասնագոմ:

Գողոնը հայտնաբերվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Բուժիչ երաժշտություն

Սկիզբը՝ նախորդ համարում



Վաղ միջնադարի հանրահայտ բժիշկ Ավիցենան երաժշտության միջոցով բուժում էր ներվային եւ հոգեկան հիվանդներին: Իսկ արդեն 19-րդ դարի սկզբներին Եվրոպայում երաժշտական թերապիան լայն տարածում գտավ հոգեբուժական հաստատություններում:

20-րդ դարի 70-ականներին երաժշտությունն սկսեց կիրառվել նաեւ հոգեկան հիվանդություններ ունեցող հանցագործների համար նախատեսված հոգեբուժական հաստատություններում: Մասնագետները փաստում էին, որ կալանավորների համար ամենավատ պատիժն էր, երբ նրանց չէին թույլատրում մասնակցել այդ երաժշտական ներկայացումներին: Այսօր էլ Չինաստանի տարածքում, համաձայն դարերից եկող ավանդույթի, մեծ համբավ է վայելում ձայնային վիբրամերսումը, որի էությունը առանձին ձայնավոր հնչյունների երգեցողության մեջ է, որի օգնությամբ հնարավոր է բուժել մարդու օրգանիզմի այս կամ այն խաթարված համակարգը: Այդ երկրում մեծ քանակությամբ թողարկվում են երաժշտական ալբոմներ, որոնք առաջին հայացքից թերեւս անսովոր թվան՝ «Ստամոքս», «Սիրտ», «Թոքեր», «Լյարդ» վերտառությամբ: Այս երաժշտական ստեղծագործությունները մարդիկ «ընդունում են» որպես դեղահաբեր, որոնք ուղղված են համապատասխան օրգանների աշխատանքը կարգավորելուն: Իսկ Ֆրանսիայում երաժշտական թերապիայով զբաղվող մասնագետները լայնորեն կիրառում են Մոցարտի ստեղծագործությունները, որի երաժշտությունը զբաղեցնում է առաջատար դիրք՝ իր բարերար ազդեցության ցուցանիշներով:

Մեկ այլ առեղծվածային օրինակ է երաժշտության ազդեցությունը կենդանի էակների, բույսերի վրա: Ապացուցված է, որ դասական երաժշտությունը խթանում է բույսերի աճը, իսկ ռոքը, հակառակը, ճնշում է:

Քննարկեցինք երաժշտության դրական ներգործությունը, սակայն, ցավոք, հայտնի են փաստեր, երբ օգտագործելով երաժշտության՝ մարդու ներաշխարհի վրա ներազդելու կարողությունը, այն կիրառում են ստոր նպատակներով:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ ամերիկահիրաքյան պատերազմի տարիներին, հարցաքննությունների համար նախատեսված մենախցերում ժամեր շարունակ առանց ընդմիջման հնչող բարձրաձայն երաժշտության միջոցով «կոտրում» էին կալանավորներին՝ նրանց ենթարկելով լուրջ հոգեբանական կտտանքների: Հետագայում փրկված բանտարկյալները հիշում էին, որ տանջանքների այս տիպը առավել անտանելի էր ֆիզիկական խոշտանգումների համեմատությամբ, շատերը չդիմանալով այդ պայմաններին՝ խելագարվում էին: Նրանց ստիպում էին օր ու գիշեր լսել բարձրաձայն երաժշտություն, որին հաջորդում էր բացարձակ լռության եւ մթության մի քանի ժամ, այնուհետ՝ կրկին երաժշտություն...

Նույնը վկայում էին իռլանդական հանրապետական բանակի անդամները. բարձր աղմուկը, որն անդադար խուժում էր իրենց բանտախցերը, բոլոր կիրառվող տանջանքներից ամենասարսափելին էր...

Երաժշտությունը մարդուն ուղեկցում է ողջ կյանքում՝ ինչպես ուրախության, այնպես էլ տխրության պահերին: Յուրաքանչյուր մարդու վերաբերմունքը դեպի երաժշտությունը, ընդհանրապես արվեստը, ոչ միայն նրա կրթվածության, այլեւ բարության եւ մարդկայնության ցուցանիշն է: Ուստի, կարեւոր է, թե ինչպիսի երաժշտական նախընտրություն ունենք, քանի որ կախված դրանից՝ կարող ենք ենթադրել, թե ինչպիսի երաժշտական ճաշակ կունենան մեր ապագա սերունդները, հետեւաբար՝ ինչպիսի մշակույթի կրող կդառնան մեր հասարակությունը եւ պետությունը ապագայում:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Քույրաբար

Ոստիկանություն է զանգել 32-ամյա մի կին եւ հայտնել, որ վիճաբանության ժամանակ եղբոր կինը ձեռքերով ու ոտքերով խփել է իր եղբորը՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Ձեռնարկվում են միջոցառումներ Նարինեի անձը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ:

Գուշակեց՝ Ֆինանսական կորուստ

Դատախազությունից բաժին է ստացվել մի կնոջ դիմումը, որ 2018 թ. հոկտեմբերից ծանոթ մի կին, ներկայանալով բախտագուշակ, ծառայություն մատուցելու պատրվակով նախ խարդախությամբ, իսկ հետո արդեն սպառնալով իրենից շորթել է 15 հազար դոլար:

Հանգամանքները պարզվում են:

Հարուստ պահակը

Գինու, կոնյակի մի գործարանի 60-ամյա պահակը հաղորդում է տվել, որ շենքի իր նկուղից տղան գողացել է 10 միլիոն դրամ եւ 4.500 դոլար:

Քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ պահակի որդին ներկայացրել է բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Ձեռնարկվում են անհույս միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Հեքիմը

51-ամյա մի կին հաղորդում է տվել, որ այս տարվա ապրիլին մեկ այլ կին, ներկայանալով որպես բժշկական գործունեություն ծավալող անձ, իր տանը բժշկական օգնություն է ցուցաբերել քաղցկեղով հիվանդ ամուսնուն, ինչի համար ինքը վճարել է մոտ 300 հազար դրամ: Սակայն ամուսնու վիճակն ավելի է վատացել, ուռուցքը մեծացել է, հեքիմ կինն էլ հրաժարվել է բուժումները շարունակելուց եւ իր պահանջով վերադարձրել է 200 հազար դրամը:

Ձեռնարկվում են միջոցառումներ հեքիմի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ:

Պրոֆիլի վաճառք

Ոստիկանություն է զանգել 11 տարեկան մի տղա եւ հայտնել, որ ինքը վճարային տերմինալով 150 ռուբլի է ուղարկել մեկ այլ տղայի՝ համակագչային խաղում պրոֆիլը գնելու, սակայն իրեն գցել են սեւ ցուցակ:

Պարզվել է, որ Ռուսաստանում բնակվող հայ տղան, ամռան արձակուրդներին գտնվելով տատի տանը, բջջային հեռախոսով առցանց խաղի ընթացքում կապ է հաստատել անծանոթ տղայի հետ, որն առաջարկել է գնել խաղի պրոֆիլը 2000 ռուբլով: Ռուսաստանաբնակ տղան համաձայնել եւ փոխանցել է իր նշանաբառը եւ ծածկագիրը:

Կաթնային «եղբայրություն»

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «քթոսկրերի կոտրվածք՝ բեկորների տեղաշարժով, արտաքին քթի փափուկ հյուսվածքների սալջարդ վերք քթի մեջքի շրջանում» բարդ ու երկար ախտորոշմամբ բուժօգնություն է ստացել 60-ամյա մի մոլոկան: Նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է հարեւանի՝ իրեն խփելու հետեւանքով:

Մեկնած ոստիկանները պարզել են, որ ճանապարհով ջրագիծ քաշելու ժամանակ նրա հայրենակից-մոլոկան 52-ամյա հարեւանն է վիճաբանել եւ քարով խփել քթին:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ օգոստոսի 22-ից 29-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 27 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր կողոպուտի, 2-ը՝ գողության, 2-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության, ազատությունից ապօրինի զրկելու եւ շորթման, 1-ը՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու, 1-ը՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ ծառեր, թփեր եւ բուսածածկը ապօրինի հատելու կամ ծառերը, թփերն առանց թույլտվության տեղափոխելու, 1-ը՝ պետական սահմանն ապօրինի հատելուն հանցակցելու, 1-ը՝ անօրինական միգրացիայի կազմակերպման համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 8 հետախուզվող:

Արձանագրվել է 107 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 154-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 22 դեպք. 1 մարդ զոհվել է, 23-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Օգոստոսի 26-ին Երեւանի Մաշտոցի պողոտայում իրար են բախվել «Օպել», երկու «Նիսան» եւ երկու «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ներից մեկի 56-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Երեւանի Տիտոգրադյան եւ Խաղաղ Դոնի փողոցների խաչմերուկում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 81-ամյա կնոջ, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Երեւանի Սեբաստիայի փողոցում իրար են բախվել «Տոյոտա», «Ֆոլքսվագեն» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել»-ի 3-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 25-ին Երեւանի Աճառյան փողոցում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 32-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Սեւան-Երեւան ճանապարհի 16-րդ կմ-ին իրար են բախվել «Ռենո» եւ «ՎԱԶ-21015» մակնիշի ավտոմեքենաներ. «Ռենո»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Սեւան-Երեւան ճանապարհի 14-րդ կմ-ին իրար են բախվել «ԿամԱԶ» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 31-ամյա վարորդը եւ 23-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Գորիս քաղաքի Սյունիքի փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան բախվել է «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-2106»-ի 3-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի 25-րդ կմ-ին «Շեվրոլե Թրահիլբլազեր» մակնիշի ավտոմեքենան ընկել է ձորը. 42-ամյա վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Օգոստոսի 27-ին Երեւանի Արմենակյան փողոցում «Ռենո» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի. «Ռենո»-ի 35-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 27-ին Երեւանի Կորյունի եւ Տերյան փողոցների խաչմերուկում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 48-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 27-ին Երեւանի Արշակունյաց պողոտայում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 34-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 26-ին Երեւանի Սաֆարյան փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 10-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 27-ին «Նիսան» մակնիշի ավտոմեքենան Արագածոտնի մարզի Օշական գյուղում վրաերթի է ենթարկել 6-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Օգոստոսի 27-ին Ակունք-Կոտայք գյուղերի սկզբնամասում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Ֆոլքսվագեն Վենտո» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «ԲՄՎ»-ի 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

«Սպանություն հաճույքի համար»

Չիկագոյից երկու երիտասարդներ նոր հանցատեսակ հնարեցին՝ «սպանություն հաճույքի համար»: Ռիչարդ Լեբն ու Նաթան Լեոպոլդը, որոնք պաշտում էին Նիցշեին, որպես զոհ ընտրեցին մի 14-ամյա տղայի: Իրենց «գերմարդ» պատկերացնելով եւ խորապես հավատացած անպատժելիությանը՝ նրանք դիմեցին արյունոտ հանցագործության: «Սպանություն հաճույքի համար» եզրույթը նոր է քրեական հանցագործությունները բնորոշող բառապաշարում: Մնհիշելի ժամանակներից մարդիկ սպանում են ատելությունից դրդված, հանուն փողի, վրեժխնդիր լինելով, ինչպես եւ գիտակցությանը չենթարկվող սեռական ազդակներից մղված: Սակայն 1924 թվականին Ամերիկայում «թրիլ-քիլինգ» հասկացությունն օգտագործվեց բնութագրելու համար այս դիվային զույգի հանցագործությունը, որը պատանուն կյանքից զրկեց հենց այնպես, հաճույք ստանալու համար...

Նիցշեի «հետեւորդները»

Տասնյոթամյա Ռիչարդ Լեբն ու տասնութամյա Նաթան Լեոպոլդը իրենց այնքան բարձր էին համարում շարքային մահկանացուներից, որ որոշել էին տնօրինել ուրիշի կյանքը: Նրանք իրենց համոզել էին, որ խուզարկուները կհայտնվեն փակուղում. հանցագործության դրդապատճառներ չկան, հանցանշաններ չկան, կասկածյալներ՝ նույնպես, եւ իրենք կվայելեն անպատիժ մնալու հաճույքը: Այն, որ նրանք բռնվեցին տարրական սխալի պատճառով, վկայում է մտածողության պարզունակության եւ արատավորության մասին այն տեսության, թե «գերմարդն» ընդունակ է իդեալական ծրագրված հանցագործություն կատարել:

Այս զույգը մեծացել էր Չիկագոյում, ապրել՝ բարեկեցիկ կյանքով: Երկուսն էլ հարուստ ծնողներ ունեին, որոնք կատարում էին նրանց յուրաքանչյուր ցանկություն: Լեբի հայրը հանրախանութների ցանցի սեփականատեր էր: Նաթան Լեոպոլդ-ավագը նավատեր էր, Չիկագոյի ամենահարուստ մարդկանցից մեկը, եւ, ինչպես Լեբի հայրը, շռայլորեն փող էր ծախսում որդու քմահաճույքների վրա:

Ուժեղ, գեղեցիկ, մարզիկի կազմվածքով Լեբը անառակ, բայց խելացի եւ ընդունակ տղա էր: Տասնյոթամյա պատանին դարձավ Միչիգանի համալսարանի ամենաերիտասարդ շրջանավարտը: Երբեք փողի պակաս չէր զգացել: Լեբ-կրտսերի առաջին իսկ պահանջով ընտանեկան վարորդը նրան հասցնում էր հոր գրասենյակ, որտեղ Ռիչարդն առանց առարկության ստանում էր իր պահանջած գումարները: Սակայն ծնողական հոգատարությունից լկտիացած տղեկի համար այդ ամենը քիչ էր, ու նա սկսեց մտմտալ այնպիսի մի բան, որը հագուրդ կտար «սուր զգացողություններին»:

Նաթան Լեոպոլդը նույնքան խելացի, բայց այդքան վառ անհատականություն չէր: Այդ դանդալոշ տղան ընդգծված վահանաձեւ գեղձ ուներ, ցածրահասակ էր, կլորավուն ուսերով, տասնչորս տարեկանից համասեռամոլության հակում էր դրսեւորում: Բայցեւայնպես, Լեոպոլդը նույնպես յուրատեսակ փոքրիկ հանճար էր. խոսում էր տասը լեզվով եւ տասնութ տարեկանում հասցրել էր ավարտել Չիկագոյի համալսարանը՝ փիլիսոփայության բակալավրի աստիճանով: Հոգեբանները հետո ասում էին, որ Լեոպոլդը Լեբի ազդեցության տակ է եղել: Լեոպոլդը ոգեւորված կլանում էր գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեի աշխատությունները եւ ջանում նմանվել նրա «գերմարդուն»: Հասկանալով, որ բավական հեռու է իր երազանքից՝ նա սկսեց իրեն «գերկին» երեւակայել՝ գեղեցիկ, ուժեղ, ամենակարող արքայի ստրկուհի: Եվ երբ Ռիչարդ Լեբն ընկերոջը ներկայացրեց «հաճույքի սպանության» գաղափարը, համարյա չէր կասկածում, որ Լեոպոլդն իր հանցակիցը կդառնա:

Նամակում, որը սպանությունից առաջ Ռիչարդն ուղարկել էր Նաթանին, այսպիսի տողեր կային. «Գերմարդը պատասխանատու չէ այն ամենի համար, որ կատարում է, բայց եւ սխալվելու իրավունք չունի: Մենք գերմարդիկ ենք: Ոչինչ չի կարող կանգնել մեր ճանապարհին»:

1924 թվականի հունվարին մտահղացված դավադրությունը հանցագործներին հաջողվեց իրագործել միայն մայիսին: Չորս ամիս գնաց չարագործության մանրակրկիտ մշակմանը: Վերջին պահին Լեոպոլդն առաջարկեց փրկագին պահանջել տղային վերադարձնելու համար, որն այդ ժամանակ արդեն մեռած կլինի: Դավադիրները միմյանց ուղարկած նամակներում մանրամասն քննարկում էին սպանության ծրագիրը՝ ոգեւորված «բանավիճելով» այն ամենի մասին, որ պիտի անեին: Վերջապես երկկողմանի համաձայնություն ձեռք բերվեց եւ ընտրվեց զոհը՝ տասնչորսամյա Բոբի Ֆրենքսը:

Լեբը Բոբիին ճանաչում էր թենիսի պարապմունքներից: Տղան նրան իր ընկերն էր համարում եւ առանց երկմտելու կհամաձայներ միասին զբոսնել ավտոմեքենայով: Բոբին լավ ընտանիքից էր, հաճախում էր այն տան հարեւանությամբ գործող մասնավոր դպրոցը, որտեղ ապրում էին ապագա մարդասպանները:

Շարունակելի

Անիծվածների կոկին

Սկիզբը՝ նախորդ համարում

Կալանավորի հագուստով ստեղծագործները

«Վոլոգոդյան գարշապար»-ի հայտնի կալանավորներից է Միխայիլ Բուխարովը: Նա «Օստրով» նվագախմբի ղեկավարն է: Խումբը կազմված է մի քանի ցմահ բանտարկյալներից: Երաժշտական ընդունակություններ ունեցող Բուխարովը կրկնահանցագործ է, 15 տարի անցկացրել է տարբեր ուղղիչ-աշխատանքային գաղութներում: 1990-ականների սկզբին կալանավայրից ազատվելուց հետո նա ցանկանում էր ամուսնանալ, սակայն հարսնացուի հորը ծեծելուց հետո դիմել էր փախուստի: Թաքնվելով հետաքննությունից՝ կատարում է մի քանի սպանություն:

Սանկտ Պետերբուրգի բնակիչ, կալանավոր Վլադիմիր Գանինը մասնագիտացել է նկարչության մեջ: Մինչեւ կալանավայրում հայտնվելը, նա եռակցող ու փականագործ էր: Ցավոք, շատ էր «մտերմացել» Բաքոսի հետ. շարունակ խմում էր: Բոլոր սպանությունները կատարել էր անսթափ վիճակում: Առաջին բաժակակից ընկերոջը սպանել էր մուրճով, իսկ երկրորդին այն բանի համար, որ համարձակվել էր վիրավորել իր նախկին կնոջը:

Հանցագործությունները կատարելուց հետո նա թաքնվել էր իրավապահներից, սակայն տեղեկանալով, որ ծանոթներից մեկը ցանկանում է իրավապահներին հայտնել իր գտնվելու վայրը, որոշում է նրա հետ հաշվեհարդար տեսնել: Մոլագարը զոհին խփում է թավայով եւ քունքի մեջ խրում շաղափը: Որոշ ժամանակ անց սպանվածի ընկերուհին է զոհվում մոլագարի կացնից: Ներկայումս Գանինը նկարչությամբ է զբաղվում «Վոլոգոդյան գարշապար»-ում նույնիսկ արհեստանոց են նրան տրամադրել:

Օգնենի կղզում գտնվում են ոչ միայն մոլագարներ: Այնտեղ հավերժ արտաքսվել են 1990-ական թթ. իրենց ոճրագործություններով հայտնի Օրեխովյան կազմակերպված հանցախմբի մասնակիցները. խմբավորման պարագլուխ Օլեգ Պիլեւը, քիլերներ Օլեգ Միխայլովը եւ Սերգեյ Մախալինը: Այս երեքը կատարել են 54 սպանություն, իսկ Պիլեւը մեղադրվում է նաեւ մարդկանց առեւանգման եւ շորթման մեջ: Հետաքրքիր է նաեւ, որ քիլեր Միխայլովը հանցակիցների հետ դատապարտված լինելով ցմահ բանտարկության՝ հնարավոր գտավ 2018 թ. ամուսնանալ միլիցիայի նախկին աշխատակցուհու հետ:

Այսօր «Վոլոգոդյան գարշապար» գաղութն ամբողջովին մեկուսացված է, անմիջական ցամաքային ճանապարհ չունի ցամաքի հետ: Փոխարենը՝ հարեւան Սլադկի կղզին ունի, քանի որ այնտեղ են ապրում ՈՒԳ-N 5-ի աշխատակիցները:

Այսօր գաղութի չորս մասնաշենքերը, որոնք նախատեսված են 200 կալանավորի համար, զբաղեցնում են շուրջ 190 հոգի, որոնց մի մասը դատապարտված է ցմահ, իսկ մյուսները՝ երկարատեւ բանտարկության: Նրանցից միայն 60-ին է թույլատրվում աշխատել: Կարում են ձմեռային ձեռնոցներ, բարձեր, շինարարական եւ բանվորական արտահագուստ: Մի անգամ կալանավորները 2,5 հազար կոստյում կարեցին ինկասատորների համար: Լավ աշխատելիս կարող են ամսական վաստակել միչեւ 20 հազար ռուբլի: Կալանավորներից ոմանք գումարը հավաքում են ազգականների համար, մյուսները կատարում են գնումներ՝ իրերի անվանացանկով: Արգելվում է պատվիրել ծխախոտ եւ ալկոհոլ: Փողը առձեռն չի տրվում: Պատվերների արժեքը վճարվում է գաղութի հաշվապահությունում գտնվող կալանավորի անձնական հաշվից:

ՈՒԳ-N 5-ում գործում է մեծ պատժաժամկետների դատապարտված 38 կալանավորից կազմված հատուկ տնտեսական ջոկատ: Նրանք են կատարում տարածքի խնամքը, պատրաստում կերակուր եւ բարեկարգում «Վոլոգոդյան գարշապարը», բնակվում են չորսհոգանոց բանտախցերում եւ իրավունք ունեն գաղութի ներսում ամենամյա արձակուրդի: Տնտեսական ջոկատում կալանավորները կամավոր են անդամագրվում, իսկ ցմահ ազատազրկվածները նման հնարավորություն չունեն:

Ցմահ հարմարավետ

ՈՒԳ-N 5-ի բանտախցերում հիմնականում իրենց պատժաժամկետն են անցկացնում երկու-երեք հոգի, սակայն կան նաեւ մեկտեղանոց բանտախցեր: Հիմնականում նման բանտախցում մանկապիղծներն են գտնվում: Սակայն կան ագահ բանտարկյալներ, որոնք չեն ցանկանում կիսել ծանրոցը բանտախցի ընկերների հետ: «Վոլոգոդյան գարշապար»-ում կալանավորները հիմնականում նախընտրում են ունենալ հարեւան կամ հարեւաններ:

Գաղութի մի շարք բանտախցեր չափազանց մեծ են, նրանց մակերեսը հասնում է մինչեւ 40 քառակուսի մետրի, իսկ նորմատիվը մեկ մարդու համար 4 քառակուսի մետր է: Դա բացատրվում է նրանով, որ դրանք եղել են մենաստանի սենյակներ, որոնք նախատեսված են եղել տարբեր կարիքների համար:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Կյանքից «հոգածները»

Հովսեփ Հակոբյանը, պայմանավորված իր անցյալով, շատ էր եղել ոստիկանության Շենգավիթի բաժնում՝ գողություն, կողոպուտ, մարմնական վնասվածք, թմրամոլություն: Այս անգամ «հյուրընկալվեց» քրեական օրենսգրքի 266 հոդվածի 4-րդ մասի մեղադրանքով (թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը՝ դրանք իրացնելու նպատակով):

Թմրամիջոցի նկատմամբ Հովսեփի կիրքն այնքան մեծ է, որ ութամյա կրթությունը չի խանգարել քիմիայի ասպարեզում «վարպետանալուն»: Ինչից՝ ինչքան եւ ինչ եղանակով կողեին թմրամիջոց ստանալը մի բաժակ ջուր խմելու պես է Հովսեփի համար:

Օգոստոսի 15-ն էլ սովորականի պես էր: Թմրամիջոցի պահանջը խեղդում էր: Գործի անցավ. մի քիչ համբերություն՝ եւ կլողար «երանության» գրկում: Կմոռանար մարմինը պատած վերքերի ցավն ու հոգսերը...

Թմրամիջոցը պատրաստ էր: Մինչ օգտագործելը՝ առանձնացրեց երկու հաճախորդին տալիքը եւ անցավ բուն նպատակին, երբ անսպասելի տուն մտան ոստիկանները...

Մեղք ընդունելու գործում էլ փորձ ուներ: Խոստովանեց, զղջաց, ասաց, որ գիտի՝ առողջությունը վերջնականապես է քայքայել:

Թմրակախվածությունը հաղթահարելու կամք չունեցողների մի ստվար զանգված փորձում է ալքիմիկոս դառնալ: Մինդեռ նրանց «ստեղծագործություն» քիմիական խառնուրդն իրականում մահ է: Այդ թույնը նախ փտախտ է առաջացնում, հետո մեկ-երկու տարում սպանում. բազմիցս գրել ենք այդ մասին ու գրելու ենք, քանի դեռ մի ստվար զանգված, գիտակցելով հանդերձ, ինքնասպանության է գնում:

Բենզինից ու մի շարք այլ նյութերի խառնուրդից պատրաստված թմրամիջոցը հերթական անգամ ներարկվելու համար էին ընկերոջ՝ Համլետ Պետրոսյանի երեւանյան տանը հավաքվել Սիմոն Հովհաննիսյանն ու Երվանդ Գեւորգյանը: Բայց անսպասելի «հյուրեր» ունեցան: Ոստիկաններն էին:

Այս դեպքը կարող էր քիմիական տարբեր նյութերով պատրաստված թմրամիջոցի օգտագործման ու ոստիկանների բացահայտման հերթական պատմություն լինել: Բայց առանձնացավ: Դեպքից երկու ամիս անց քառասունհինգամյա Համլետ Պետրոսյանը մահացավ. «կոկորդիլոսը» քայքայել էր մարմինը...

Բենզինի հավելումով թմրամիջոցը հերթական անգամ ներարկվելու նպատակով էին հանդիպել նաեւ Արմավիրի մարզի բնակիչներ Հայրապետյանն ու Նվեր Հակոբյանը: Հանդիպման վայրը Մամիկոնի՝ թմրաորջի վերածված ավտոտնակն էր:

Ոստիկանության Արմավիրի բաժնի քրեական հետախույզները թմրամոլներին անակնկալի բերեցին հենց թմրամիջոց պատրաստելիս: Խուզարկությամբ հայտնաբերվեցին թմրամիջոց պատրաստելու պարագաները՝ ծծմբի շերտը քերած լուցկու տուփեր, բենզինով լցված ներարկիչներ...

Նախապատրաստված նյութերով քննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Կասկածանքը հաստատվեց

Մարտի 16-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում մայրաքաղաքի հիվանդանոցներից մեկի բուժքույրը հաղորդում էր տվել, որ ինչ-որ մեկն աշխատասենյակի սեղանին դրված իր պայուսակից դրամապանակ է գողացել, որի մեջ եղել է անձնագիր, 140 հազար դրամ եւ 10 եվրո:

Հարուցվեց քրեական գործ:

Ոստիկանները գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեցին: Տեսահսկող սարքերը մարզագլխարկով կասկածելի մի տղամարդու էին ֆիքսել, որին ոչ ոք չէր ճանաչում: Եվ եթե նույնիսկ նա էր, ապա միայն արտաքին նկարագիրը պարզելը բացահայտման համար քիչ էր. անհրաժեշտ էր ճշտել անձնական տվյալները, գտնվելու վայրը եւ, որ ամենակարեւորն էր, հայտնաբերել նրան:

Քրեական հետախույզներին ո՛չ այդ, ո՛չ էլ հաջորդ օրը գողությունը կատարած անձին հայտնաբերել չհաջողվեց: Որոնողական աշխատանքները շարունակվեցին, եւ դեպքից ամիսներ անց գողությունը բացահայտվեց:

Օգոստոսի 15-ին ոստիկանները Պարույր Սեւակի փողոցի շենքերից մեկից Ուզբեկստանի Հանրապետության 39-ամյա մի քաղաքացու բերման ենթարկեցին:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ նա նույն օրը հիվանդանոցի մեկ այլ աշխատասենյակից էլ էր դրամապանակ գողացել, իսկ մայիսի 6-ին Իջեւանի մի գրադարանից էր դրամապանակ գողացել, որի մեջ փող ու բանկային քարտեր էին: Ապրիլի 30-ին էլ Շենգավիթում «շտապօգնության» ենթակայանի սենյակներից մեկից էր դրամապանակ հափշտակել: Անձնական խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեցին տարբեր տաշվածքների մոտ երեք տասնյակ բանալիներ, դրամապանակներ, զարդեր:

Կատարվում է նախաքննություն:

Բացահայտվեց ժամեր անց

Օգոստոսի 17-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, որ Բաբաջանյան 159 շենքի մոտ կայանված իր մեքենայից գողություն են արել:

Ոստիկանության օպերատիվ խումբը դեպքի վայրում արձանագրեց, որ կոտրել են մեքենայի ապակին եւ սրահից գողացել պայուսակ: Մինչ ոստիկանները ձեռնարկում էին միջոցառումներ հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ, հնչեց երկրորդ ահազանգը:

Քաղաքացին հայտնում էր, որ Իսակովի 36 շենքի դիմաց կայանված իր մեքենայից գողություն են արել: Կոտրել էին ապակին եւ մեքենայի սրահից հափշտակել դրամապանակ, որի մեջ եղել էր փող ու քարտեր: Ոստիկանները կասկածներ ունեին, որ գողությունները նույն մարդու ձեռքի գործն է:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողների օպերատիվ գործողությունների շնորհիվ գողությունները ժամեր անց բացահայտվեցին: Ոստիկանություն բերման ենթարկվեց 28-ամյա մի տղամարդ: Նա խոստովանեց կատարածը:

Կատարվում է քննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գողություններ մեքենաներից

Օգոստոսի 11-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում մի քաղաքացուց հաղորդում էր ստացվել, որ գիշերը գողացել են Սարյան փողոցում կայանված իր «Մերսեդես»-ի կողային հայելիները: Քրեական հետախույզները համապատասխան միջոցառումներ էին իրականացնում, երբ օգոստոսի 20-ի առավոտյան նոր ահազանգ ստացվեց: Գիշերը Արամի փողոցի շենքերից մեկի մոտ կայանված «Մերսեդես»-ի կողային հայելիներն էին գողացել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ իրավապահները պարզեցին, որ գողությունները կատարել է Ամիրյան փողոցի 21-ամյա մի բնակիչ: Կասկածվողը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժին եւ տվեց խոստովանական բացատրություն:

Օգոստոսի 17-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում մի քաղաքացուց ահազանգ էր ստացվել, որ րոպեներ առաջ կոտրել են Բաբաջանյան փողոցում կայանված իր «Մազդա»-ի ապակին եւ սրահից գողացել պայուսակը:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի օպերատիվ խումբը գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումներ էր ձեռնարկում, երբ ստացվեց նույնատիպ մեկ այլ ահազանգ: Այս անգամ կոտրել էին Իսակովի պողոտայում կայանված «Մերսեդես»-ի ապակին եւ սրահից գողացել դրամապանակ, որի մեջ փող ու քարտեր էին:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ գողությունները կատարել է 18-ամյա մի երիտասարդ: Նա բերման ենթարկվեց բաժին, տվեց խոստովանական բացատրություն եւ մասամբ ներկայացրեց գողոնը:

Կատարվում է քննություն:

Գոռ ՎԱՆՅԱՆ

www.police.am

Ոստիկանները բացահայտեցին գողությունները

Օգոստոսի 20-ի գիշերը Կենտրոն վարչական տարածքի մի խանութից ու գեղեցկության սրահներից գողություններ էին կատարվել: Երեք դեպք՝ մի գիշերվա ընթացքում:

Գողության մասին առաջին ահազանգը ոստիկանության Կենտրոնական բաժնում ստացվեց ժամը 5.35-ին: Հայտնում էին, որ անհայտ անձը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է Մաշտոցի պողոտայի հագուստի խանութի դուռը եւ գողացել է դրամապանակներ, պայուսակ:

Րոպեների տարբերությամբ եւս երկու հաղորդում ստացվեց՝ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Պուշկինի եւ Թումանյան փողոցների գեղեցկության սրահների դռները, գողացել փող եւ խնամքի պարագաներ:

Քրեական հետախույզները օգոստոսի 21-ին, գողությունները կատարելու կասկածանքով, Բուռնազյան փողոցից բերման ենթարկեցին 17-ամյա մի երիտասարդի:

Նախապատրաստվում են նյութեր:

Նոյեմբերյանի ոստիկանների բացահայտումը

Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները, ստացված տեղեկություններն իրացնելով, պարզել են, որ Ոսկեվան գյուղի 50-ամյա մի բնակիչ հունվար-փետրվար ամիսներին գյուղի հարակից հանդամասից, առանց թույլտվության, ապամոնտաժել է ցինկապատ խողովակներ եւ տեղափոխել իր տան բակ:

Նախապատրաստվում են նյութեր:

Կրակոցներ Արցախի փողոցում

Օգոստոսի 23-ին ոստիկանության Էրեբունու բաժին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ արմնկահոդի եւ որովայնի կտրած-ծակած վերքերով բուժօգնության է դիմել 23-ամյա մի երիտասարդ:

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողների օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Արցախի փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ քաղաքացուն կտրող-ծակող գործիքով մարմնական վնասվածքներ է պատճառել Նոր Արեշի 33-ամյա մի բնակիչ:

Պարզվել է նաեւ, որ վիճաբանության ընթացքում հիվանդանոց տեղափոխված երիտասարդը գազային ատրճանակից մի քանի անգամ կրակել է իրեն վնասվածքներ հասցնողի ուղղությամբ:

Հարուցվել է քրեական գործ:

Կողոպուտը բացահայտվեց «տաք հետքերով»

Օգոստոսի 20-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, որ Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցու մոտակայքում խփել են իրեն եւ հափշտակել փող, բջջային հեռախոս ու փախել:

Ոստիկանության պարեկապահակետային ծառայության գնդի աշխատակիցների օպերատիվ գործողությունների շնորհիվ հանցագործությունը «տաք հետքերով» բացահայտվեց:

Կողոպուտը կատարելու կասկածանքով Մաշտոցի պողոտայից ոստիկանություն բերման ենթարկվեց 16-ամյա մի պատանի, որը խոստովանական ցուցմունք տվեց:

Կատարվում է հետաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Անփորձանք երթևեկություն

Վերջին շրջանում հաճախակի են դեպքերը, երբ մեքենայում հրդեհ է բռնկվում, իսկ շիջելուց հետո պարզվում է, որ վնասը միայն գույքային չէ՝ կան մահ, մարմնական վնասվածքներ...

Օգոստոսին 5-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան Արարատի մարզի Տիգրանաշեն գյուղում բախվել էր ճանապարհի երկաթբետոնե արգելապատնեշին եւ մասամբ կախվել ձորը, իսկ մեքենայում հրդեհ էր բռնկվել: Դեպքի վայր ժամանած փրկարարներն ու ոստիկանները մեքենայում հայտնաբերեցին ուղեւորուհու մոխրացած դիակը, իսկ մեքենայի վարորդն ու մյուս ուղեւորը տեղափոխվել էին հիվանդանոց:

Հուլիսի 24-ին Կոտայքի մարզում տեղի ունեցած վթարի ժամանակ հրդեհ էր բռնկվել «ՎԱԶ-2109» մակնիշի մեքենայի սրահում: Դեպքի վայր հասած ոստիկաններին ու փրկարարներին հաջողվել էր ժամանակին հանգցնել կրակը, իսկ մեքենայի վարորդն ու երկու ուղեւորները տեղափոխվել էին հիվանդանոց:

Ավտոմեքենան իր կառուցվածքով եւ բովանդակությամբ խիստ դյուրավառ է. մեծ քանակության վառելիք է կրում, հագեցած է էլեկտրական սարքավորումներով, իսկ կառուցվածքի մեջ առկա են քիմիական դյուրավառ նյութեր: Այս ամենից կարելի է հետեւություն անել, որ մեքենայում հնարավոր է հրդեհի բռնկում՝ նույնիսկ ընթացքի ժամանակ: Եվ եթե առաջին երկու-երեք րոպեների ընթացքում համապատասխան միջոցներ չձեռնարկվեն՝ տասնհինգ րոպեն բավական է, որ մեքենան ամբողջովին այրվի:

Վերը նշված դյուրավառ հատկությունները հաշվի առնելով՝ ավտոարտադրողներն իրենց արտադրանքը համեմատաբար պաշտպանված են թողարկում, բայց...

Հրդեհն ինքնին չի կարող առաջանալ, դրա համար նպաստավոր պայմաններ են պետք: Որպես կանոն՝ մեքենաներում հրդեհ է բռնկվում տեխնիկական անսարք վիճակի, նորոգման աշխատանքների ժամանակ անվտանգության կանոնները չպահպանելու, ինչպես եւ վարորդների անփութության հետեւանքով: Հրդեհի անմիջական պատճառ կարող են դառնալ էլեկտրահամակարգում կարճ միացումները, վառելիքի արտահոսքը, զոդման աշխատանքները, ծխախոտի մնացորդները եւ այլն:

Հատկապես դյուրավառ են թափքի ներկը, նստարանների եւ դռների պաստառները, ռետինե եւ պլաստիկե դետալները, քսայուղերը եւ, վերջապես, բուն վառելիքը: Խոցելի են էլեկտրալարերն ու սարքավորումները. թեեւ մեքենայում բարձր լարում չկա, սակայն եղածն էլ բավական է կարճ միացման համար, ինչի հետեւանքով լարերը գերտաքանում են, եւ մեկուսիչները սկսում են այրվել: Այս ամենին կարելի է ավելացնել ժամանակավոր վտանգաշատ առարկաները. խոսքը տարաբնույթ ուղեբեռների մասին է. վառելիքի տարա, յուղոտ լաթեր, քիմիկատներ եւ այլն:

Ավտոմեքենայում բռնկված կրակը մարելու համար «ավանդական» միջոցները՝ ջուրը, ավազը, ծյունը, շորի կտորը սակավ արդյունավետ միջոցներ են: Այրվող յուղն ու բենզինը ջրով հանգցնելու փորձերն ապարդյուն են. դրանք առավել թեթեւ են եւ շարունակում են այրվել ջրի երեսին: Լաթի կտորով երբեմն անհնար է մարել բարդ կառուցվածքի ագրեգատների շրջակայքում բռնկված կրակը. օդի հոսքը նման իրավիճակում, միեւնույն է, կշարունակվի: Իսկ անհրաժեշտ քանակության ավազ տվյալ պահին միշտ չի հնարավոր հայթայթել, եւ հետո՝ ոչ բոլորն են իրենց մեքենաներում բահ ունենում:

Ասվածից կարելի է ենթադրել, որ կրակի դեմ պայքարելու լավագույն միջոցը, մեքենայի գոյությունը պահպանելու, ինչպես եւ դժբախտ պատահարներից խուսափելու համար, կրակմարիչի առկայությունն է մեքենայում, պարտադի՛ր առկայությունը, քանզի ոչ ոք երաշխավորված չէ արտակարգ իրավիճակներից:

Հրդեհի դեպքում նախ անհրաժեշտ է անմիջապես դուրս գալ մեքենայից, հնարավորության դեպքում օգնության կանչել հրշեջների եւ առանց հապաղելու սկսել մարման գործընթացը: Նախ չարժե կրակմարիչի ամբողջ պարունակությունը միանգամից սպառել. մեկ կամ մի քանի անգամ կրակի ուղղությամբ այն պահելուց հետո, եթե կրակը չի նահանջում, փորձեք ուրիշ կողմից մարել, փորձեք պարզել կրակի աղբյուրը:

Հրդեհն անհրաժեշտ է մարել անվտանգ տարածությունից: Կրակը մարելուց հետո ուշադիր զննեք՝ արդյո՞ք ծխացող, նոր հրդեհի օջախներ չկան. դրանք արդեն կարող եք մարել ջրով: Հրդեհը մարելուց հետո մեքենան պետք չէ թեկուզ մի քանի րոպեով ուշադրությունից դուրս թողնել:

Եթե նկատեք, որ կրակը հասնում է բենզաբաքին կամ գազի բալոնին, ապա պետք չէ ռիսկի դիմել. անհրաժեշտ է մեքենայից հեռանալ առնվազն երեսուն մետր եւ զգուշացնել նաեւ շրջակայքի մարդկանց:

Եթե հրդեհը բռնկվել է շարժիչի հատվածում, ապա շարժիչի կափարիչը բացեք զգուշությամբ եւ օգտագործեք որպես «վահան»:

Հրդեհից հետո խորհուրդ չի տրվում մեքենան անմիջապես շահագործել, քանզի ջերմությունից վնասվում են երթեւեկության անվտանգությունն ապահովող դետալները, ասենք՝ արգելակների ռետինե խողովակները:

Միշտ պետք է լինել շրջահայաց, ուշադիր, հետեւել մի շարք պարզ կանոնների, եւ երթեւեկությունն անփորձանք կլինի:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Օգոստոսի 23-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Շիրակի մարզային վարչության եւ Ամասիայի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ ոստիկանության Ամասիայի բաժին է ներկայացել Ամասիա գյուղի 33-ամյա մի բնակիչ, որը ՌԴ Սալեխարդ քաղաքի ՆԳԲ կողմից հետախուզվում էր ավազակային հարձակման մեղադրանքով:

Նրա հայտնաբերման մասին տեղյակ է պահվել հետախուզումը նախաձեռնողին:

◆

Օգոստոսի 23-ին Դիլիջան քաղաքի Հաղարծին բնակավայրում հայտնաբերվել եւ ոստիկանության Դիլիջանի բաժին բերման է ենթարկվել նույն բնակավայրի 23-ամյա մի բնակիչ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի մեղադրանքով պատժի կրումից խուսափելու համար:

◆

Օգոստոսի 25-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել ՌԴ 27-ամյա քաղաքացի Պավել Լ.-ն, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր ՌԴ Սոչի քաղաքի ՆԳՎ կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 290 հոդվածի (կաշառք տալը կամ վերցնելը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողների կողմից տարված բացատրական աշխատանքների շնորհիվ օգոստոսի 24-ին ՔՀԳՎ է ներկայացել 50-ամյա Գրիգոր Ա.-ն, որը Շվեյցարիայի իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 139 (գողությունը) եւ 146 (խարդախությունը) հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՔՀԲ ծառայողները օգոստոսի 24-ին Երեւանի Դավթաշեն 7-րդ փողոցից բերման են ենթարկել 35-ամյա Մանուկ Կ.-ին, որը ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 (խարդախությունը), 133 (ազատությունից ապօրինի զրկելը) եւ 182 (շորթումը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Օգոստոսի 23-ին ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները, օպերատիվ տեղեկություններն իրացնելով, Նորաշեն թաղամասում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել նույն թաղի 49-ամյա մի բնակչի, որը հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Ոստիկանության Տաշիրի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ օգոստոսի 26-ին Տաշիր քաղաքի Երեւանյան փողոցից ոստիկանության Տաշիրի բաժին բերման է ենթարկվել 52-ամյա Վարդան Շ.-ն, որը ոստիկանության Տաշիրի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 38-329 հոդվածի (պետական սահմանն ապօրինի հատելու փորձը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Շիրակի մարզային վարչության եւ Աշոցքի բաժնի քրեական հետախույզները օգոստոսի 26-ին Բավրայի սահմանային անցակետից բերման են ենթարկել Վրաստանի 47-ամյա քաղաքացու, որը 2014 թ. դեկտեմբերից հետախուզվում էր ՌԴ Սամարայի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 119 հոդվածի (սպանության սպառնալիք, մարմնական վնասվածք պատճառելը) մեղադրանքով:

Ոստիկանները հայտնաբերեցին գրպանահատների

Օգոստոսի 16-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ ժամեր առաջ Թումանյան փողոցի սրճարաններից մեկում իր պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող:

Հաղորդումը ստանալուն պես ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները համապատասխան միջոցառումներ ձեռնարկեցին: Որոնողական աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի գրպանահատության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները:

Ոստիկանների պրոֆեսիոնալ գործողությունների շնորհիվ ժամեր անց գողությունը բացահայտվեց: Երեւանի Ֆրանսիայի հրապարակից ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկվեց Զավարյան փողոցի 31-ամյա մի բնակիչ:

Օգոստոսի 17-ին Վանաձորի մի բնակչուհի ոստիկանության Տարոնի բաժնում հաղորդում էր տվել, որ ժամեր առաջ Շիրվանզադեի փողոցի մի խանութում իր պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող, անձնագիր, բանկային ու սոցիալական ապահովման քարտեր, երկու արծաթյա եւ երկու հասարակ մատանիներ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի Վանաձորի Գրիգոր Լուսավորչի փողոցի 64-ամյա մի բնակչուհի:

Նույն օրը, գողություն կատարելու կասկածանքով, նա բերման ենթարկվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Կասկածվողի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց դրամապանակը՝ ողջ պարունակությամբ:

Նախապատրաստվում են նյութեր:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Վնասարարություն գողության նպատակով

Օգոստոսի 15-ի գիշերը ոստիկանություն զանգած տարբեր քաղաքացիներ հայտնում էին, որ Մաշտոցի պողոտա-Թումանյան փողոցի խաչմերուկի տերմինալներից մեկը կոտրել են, Մաշտոցի պողոտայի, Մոսկովյան փողոցի տերմինալներից գողություն են արել, վնասել են Աբովյան փողոցի տերմինալներից մեկը:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողներն առաջին ահազանգը ստանալուն պես ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունները բացահայտելու եւ կատարողին կամ կատարողներին հայտնաբերելու ուղղությամբ: Իսկ վերջին ահազանգից տասը րոպե անց ոստիկանները Աբովյան փողոցում հայտնաբերեցին մի երիտասարդի եւ, գողություններ ու գողության փորձեր կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին ոստիկանության Կենտրոնական բաժին: Պարզվեց նրա ինքնությունը:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Սարիթաղցի 24-ամյա երիտասարդը ձերբակալվել է:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքերի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Քննությունը շարունակվում է:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Սլավոն. այբուբեն / Էներգիայի ձեւ
Հայ գրող, Մեծ եղեռնի զոհ
Չինամթերք / Իլիոն
Թութակ / Բերանի խոռոչում
«Փարավոն» (Ֆիլմ)
Հոգնակիի մասնիկ
Նահապետ ... / Սննդի կետ
Բիզոն
Սիբիրյան գետ / Կարակալպակիա
Տարվա եղանակ
... Քոների / Ներկատու բույս
Կիլիկիա
Հանգած հրաբուխ, Ավստրալիա
Ժողով, Հին Ռուսիա / Արգենտին. գրող
Պատուհան
Ֆրանս. երգահան
Ճակատամարտ, 451 թ. / Ջուրակի վարպետ
Ճապոն. հագուստ / Քիմ. տարր
Թերակղզի, ՌԴ / Անգլ. փիլիսոփա
Փշոտ բույս / Գումարտակ, գունդ
Մոնե, Ռենուար / «Ոսկե բանալի»
Հանքանյութ
Կանաչեղեն
Թաջ ... / Թոմաս ...
Արտիստ
Հեռագրասարքի գյուտարար
Աշխարհամաս
4047 քմ / Կերակուր
Գետ, Ֆրանսիա եւ Գերմանիա
Արվեստ
Ռուս կինոդերասան
Կոտորած
Բնակարան
Կայուն քամի
Իմաստուն թագավոր / ... Դոլինա
Ինդոնեզ. ժողովուրդ
Դահլիճ
Հայ աշուղ / Տանջվում էր քաղցից, ծարավից
Իզիդայի ամուսինը
Հայկ. մտավոր խաղ
Միխայիլ ...
«Ռիգոլետտո», գործող անձ
... ու չամիչ / Ազնավուր, երգ
... Զախարյան (սեղանի թենիս)
Ծանրության հին չափ
Առարկա
Թրակիական ցեղ
Ք
Չարենց, պոեմ
Կուրոսավա
Ճապոնացի երգահան
Ամուսնուն կորցրած
Վարս
Պարքայլ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հնադարյան հատու զենք
Գուրգեն ... / Արքայական տուն
Տարի
Կշռի միավոր
«... մանկան հետ» / Համաստեղություն
Ցավազրկող դեղամիջոց
Ժողով / Մաշկի բնածին արատ
Ֆրանս. քաղաք
Էրեբունի
... Եկմալյան / ... Կորունյա
Չկա
Փակցված է շշին
... Պարթեւ / Մետաղաթել
... Արտմանե
Չին. փիլիսոփ. հասկացություն
Գոլսուորդիի ասքը
Գրաստի թամբ
Չվող թռչուն
Ցանքատարածք



Ապրիլ 30.08 - 05.09

Խոյ - Խորամանկությունը կարող է կասկած առաջացնել ձեր սիրելիի մեջ, աշխատեք անկեղծ լինել:

Ցուլ - Հոգ տարեք սիրելիի մասին եւ ապահովեք նրա հանգիստը:

Երկվորյակ - Սովորեք ներել: Եթե ձեզ դուր է գալիս նեղացկոտ վիճակը, ուրեմն նեղանալու այլ պատճառ մտածեք:

Խեցգետին - Ձեր ուզածին կհասնեք մի փոքր ուշ. օգնեք սիրելիին, որպեսզի նա իրագործի իր հետաքրքրությունները:

Առյուծ - Ձեր սիրելին դժվարությամբ կհասկանա, որ ձեր հարաբերություններում ինչոր բան այն չէ: Նրան կարող եք հասկացնել միայն դուք:

Կույս - Թույլ տվեք, որ սիրելին ժամանակ անցկացնի ընկերների հետ, իսկ դուք զբաղվեք ձեր գործերով:

Կշեռք - Ուշադիր եղեք, որ մտերիմները ձեր համբերությունը չչարաշահեն:

Կարիճ - Ձեր ընկերը կքննադատի ձեր գործողությունները, սակայն հիշեցրեք, որ դուք սեփական կարծիքն արտահայտելու իրավունք ունեք:

Աղեղնավոր - Կարողացեք վերջակետ դնել հին եւ սպառված հարաբերություններին եւ սկսեք նորը, որն ավելի հեռանկարային է:

Այծեղջյուր - Ազատ ժամանակը տրամադրեք ձեր ընտանիքի անդամներին, ինչը նրանց համար իսկական երջանկություն է:

Ջրհոս - Ձեր ընկերոջ անօգնական վիճակը տեսնելով՝ պաշտպանեք եւ սփոփեք, սակայն չափը չանցնեք:

Ձուկ - Զբաղվեք ընթերցանությամբ՝ նախապատվությունը տալով դասական եւ դետեկտիվ գրականությանը:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.b4-c5 f8:d2 2. c1:e7x 3.f8:g5x

Խնդիր N2 1.e3-f4 g5:e3 2.c3-d4 e3:c5 3. b4:h6x

Պատրաստեց
ՆՇԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 29.08.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: